

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/39**

ք. Երևան

«05» 12 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Է. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

- 1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- 2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- 3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,
- 4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- 5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 22 000 000 (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 5 500 000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011027795  
ՀՎՀՀ 02565827

**ԿԱՏԱՐՈՂ՝**


«ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխյան փ. 7/11  
«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11500348005680  
ՀՎՀՀ 00891484

Գլխավոր քարտուղար՝

  
H. Մկրտչյան  
(ստորագրություն)  


Տնօրեն՝

  
E. Մարտիրոսյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**«Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների**

«Պրամ»

հրավերով նախատեսված չափաքանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	71241200/45		«Պրամ»	22 000 000	22 000 000	1	«Տավուշի մարզ»	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 140 օրացուցային օր՝ համաձայն աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի՝ Հավելված N 1.1-ի

**Տեխնիկական բնութագիր**

<p>Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը</p>	<p>Քոլեջ տեղակայված է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Շիրազի փողոցի թիվ 17 հասցեում:</p> <p>Քոլեջ հաճախող ուսանողների փաստացի թիվը 150 է:</p> <p>Հողամասի մակերեսը՝ 1.3414 հա</p> <p>Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների՝ ուսումնական համալիրի մասնաշենքերը չեն բավարարում կրթական հաստատությունների նկատմամբ ՀՀ-ում սահմանված նորմատիվ պահանջներին և պիտանի չեն հետագա շահագործման համար: Անհրաժեշտ են մասնագիտական եզրակացություններ դրանք վերակառուցելու և/կամ կազմաքանդելու մասին որոշումներ ընդունելու համար:</p> <p>Համալիրը բաղկացած է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- 1) <b>Վարչական մասնաշենք՝ 308.11 քմ</b>- կառույցը երկհարկանի է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/ք ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, միջհարկային ծածկերն ու վերնածածկը հավաքովի ե/ք կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, կազմակերպված ջրահեռացմամբ: Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների, մասնաշենքը ենթակա է վերակառուցման:</li> <li>- 2) <b>Պահակակետ՝ 45.77 քմ</b> - կառույցը միահարկ է, քարե կրող կոնստրուկցիաներով, վերնածածկը հավաքովի ե/ք կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր: Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների մասնաշենքը ենթակա է կազմաքանդման:</li> <li>- 3), 4), 5) <b>Ուսումնական մասնաշենքեր՝ 279.1 քմ</b> -կառույցը միահարկ է, քարե կրող կոնստրուկցիաներով, վերնածածկը հավաքովի ե/ք կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր: Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների մասնաշենքը ենթակա է կազմաքանդման:</li> <li>- 6) <b>Կաթսայատուն՝ 75.04 քմ</b>- կառույցը միահարկ է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/ք ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, վերնածածկը հավաքովի ե/ք կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր: Ըստ</li> </ul>
---	---

	<p>ակնադիտական ուսումնասիրությունների, մասնաշենքը ենթակա է վերակառուցման:</p> <ul style="list-style-type: none"> <li>- 7) <b>Կցակառույց շինություն՝ 9.0 քմ</b>-Կաթսայատանը կցակառույց քարե կրող պատերով շինություն</li> <li>- 8) <b>Ջրավազան՝ 79.67 քմ</b></li> <li>- 9) <b>Պահեստային շենք՝ 79.67 քմ</b> - կառույցը կիսաքաղ է և ենթակա է կազմաքանդման</li> <li>- 10) <b>Ավտոկանգառ՝ 570.24 քմ</b> -կառույցը միահարկ է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/բ ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր: Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների մասնաշենքը ենթակա է կազմաքանդման:</li> <li>- 11) <b>Էլ. ենթակայան՝ 36.0 քմ</b> - կառույցը միահարկ է, քարե կրող պատերով, լանջավոր տանիքով: Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների, մասնաշենքը ենթակա է վերակառուցման: Ներկայումս ենթակայանը շահագործվում է ՀԷՑ-ի կողմից:</li> <li>- 12) <b>Սանհանգույց՝ 15.14 քմ</b>- կառույցը միահարկ է, քարե կրող պատերով, լանջավոր տանիքով: Շենքը չի համապատասխանում նորմատիվ պահանջներին, ուստի նպատակահարմար է կազմաքանդել:</li> <li>- 13) <b>Ծածկարան 58.8 քմ</b>- Կառույցը կցված է ուսումնական մասնաշենքին, և ենթակա է կազմաքանդման:</li> <li>- 14) <b>Պարիսպ՝ 213.21 քմ</b>- Մի մասում՝ բետոնե սեկցիաներից պարիսպ, մնացած մասը՝ մետաղական սյուներով և ցանցով:</li> <li>- 15) <b>Թաքսոոց 27.75 քմ</b>- կառույցը կիսաքաղ է և ենթակա է կազմաքանդման:</li> </ul>
<p>Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը</p>	<p><b>Նախատեսվում է՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ուսումնասիրել ուսումնական համալիրի տարածքը և ձեռք բերել ինժեներատեխնիկական հետազոտության եզրակացություն:</li> <li>- ձեռք բերել գոյություն ունեցող <b>բոլոր</b> մասնաշենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն /կոնստրուկցիաներում բացումների, ամրանների և բետոնի ամրության լաբորատոր գործիքային հետազոտությունների միջոցով/, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ:</li> <li>- ձեռքբերված եզրակացության արդյունքներով և գոյություն ունեցող շենքային վնասվածության և/կամ ֆիզիկական մաշվածության տվյալների հիման վրա ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների (կազմաքանդման, վերակառուցման կամ նորի կառուցման նպատակահարմարության) համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար:</li> </ul> <p><b>Նախագծային լուծումների շրջանակներում՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Նախատեսել 350 ուս/տեղ հզորությամբ ուսումնական համալիրի վերակառուցման-կառուցման աշխատանքներ,</li> <li>- ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում,</li> <li>- հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներ և սարք-սարքավորումներ (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության <b>(եթե շենքը նախագծվելու է երկու և ավելի հարկայնությամբ)</b> վերհան սարքեր կամ վերելակ <b>(համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ)</b>,</li> <li>- նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, արտաքին խաղահրապարակի կառուցում, ըստ անհրաժեշտության <b>(եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման)</b> կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և</li> </ul>

	<p>այլն (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար (առանձին նախահաշվով)</li> <li>- Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի՝ հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ</li> </ul> <p><b>Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գոյություն ունեցող վարչական մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագիծ, նախատեսելով սեյսմազինվածության բարձրացման միջոցառումներ, և վերահատակագծում՝ որպես հանրակացարանային մասնաշենք՝ 20 տեղով:</li> <li>2. Ուսումնական նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների նախագիծ 350 ուս/տեղով և ադմինիստրատիվ մասով</li> <li>3. Մարզադահլիճի մասնաշենքի կառուցման նախագիծ       <ul style="list-style-type: none"> <li>- Բաց մարզահրապարակ</li> <li>- Նախնական զինպատրաստության համար նախատեսված բաց հրապարակ</li> </ul> </li> <li>4. Արհեստանոցների մասնաշենքի կառուցման աշխատանքների նախագիծ</li> <li>5. Անասնազոմերի կառուցման աշխատանքային նախագիծ:</li> <li>6. Զերմոցային տնտեսության կառուցի նախագիծ /մինչև 400 քմ մակերեսով կամ 2 հատ 200 քմ/</li> <li>7. Ձեռնարկատիրական չրանոց</li> <li>8. Տրանսպորտային միջոցների պահպանման տարածք ծածկարանով:       <ul style="list-style-type: none"> <li>Ավտովարման հրապարակ</li> <li>- Գյուղտեխնիկա վարելու համար նախատեսված հրապարակ</li> </ul> </li> <li>9. Կաթսայատուն /վերազինվող, վերակառուցվող կամ նոր կառուցվող/</li> <li>10. Էլ. ենթակայանի /վերազինվող, վերակառուցվող կամ նոր կառուցվող- ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների /</li> <li>11. Զրի ռեզերվուարներ /հրդեհաշիջման և պահուստային ջրամատակարարման</li> <li>12. Պահակակետի կառուցման աշխատանքների նախագիծ:</li> <li>13. Տարածքի ցանկապատ- վերակառուցում կամ նորի կառուցում</li> <li>14. Այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների</li> </ol> <p><i>*Մասնաշենքերի սենյակների անվանացանկը համաձայն Հավելված N 1.2-ի</i></p>
<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p><b>Հիմնավորում՝</b></p> <p>ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 4-ի թիվ 856-Ն որոշում</p> <p><b>Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ճարտարապետահատակագծային առաջադրանք (ներ) և տեխնիկական պայմաններ,</li> <li>- ինժեներատեխնիկական հետազննության եզրակացություն (ներ),</li> <li>- շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ</li> <li>- արտաքին հաղորդակցությունների վերաբերյալ տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն</li> <li>- նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),</li> <li>- հանույթ,</li> <li>- չափագրություններ,</li> </ul>

- ոլորտային գերատեսչությունների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են՝ մշակույթ և շրջակա միջավայր

**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝**

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման,

- ՀՀ կառավարության 13.12.2007թ «ՀՀ պետական կառավարական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և N 379 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում,

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման,

- ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին», ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման 24.03.2014թ թիվ 87-Ն հրաման,

- ՍՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция>»)

- ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրաման,

- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,

- «Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք,

- ՀՀՇՆ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,

ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ

- ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:

<p>Նախագծման փուլերը</p>	<p>Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով</p>
<p>Նախագծի կազմը</p>	<p><b>«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»</b></p> <p><b><u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u></b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ընդհանուր բացատրագիր</li> <li>2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)</li> <li>3. Ճարտարապետաշինարարական մաս       <ul style="list-style-type: none"> <li>- Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/</li> <li>- Եռաչափ մոդելավորում (3D)</li> </ul> </li> <li>4. Կոնստրուկտիվ մաս       <ul style="list-style-type: none"> <li>- Կոնստրուկտիվ լուծումներ.</li> <li>- կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն</li> </ul> </li> <li>5. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (զծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)       <ul style="list-style-type: none"> <li>- էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն.</li> <li>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն</li> </ul> </li> <li>6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ</li> <li>7. Շինարարության կազմակերպման նախագիծ</li> <li>8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ</li> <li>9. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ</li> <li>10. Էներգախնայողության և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ</li> <li>11. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ</li> </ol> <p><b>Համաձայնեցումներ</b></p> <p><u>Նախագծի համաձայնեցում</u></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի ղեկավարի,</li> <li>2. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,</li> <li>3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,</li> <li>4. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի,</li> <li>5. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի, շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ):</li> <li>6. Ոլորտի գլխավոր կարգադրիչ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ</li> </ol>

Այլ պահանջներ

**Եզրակացություններ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում.

1. **Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման մեթոդով
2. **Նախագծողի կողմից** գոյություն ունեցող մասնաշենքերի տեխնիկական վիճակի մասին եզրակացության ձեռքբերում, որպես ծրագրի հիմնավորում և հետագայում դրանց օգտագործման նպատակահարմարության գնահատման ապահովում

**Փորձաքննություններ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում, որպես բարձր ռիսկայնության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ՝

1. Քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ **նախագծողի կողմից**
2. Պետական **համալիր փորձաքննության** ապահովում՝ Պատվիրատուի (<< քաղաքաշինության կոմիտեի) նախաձեռնությամբ, որոշմամբ
3. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն << օրենսդրության՝ ըստ անհրաժեշտության

**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկարմամբ պահանջներ**

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ
- Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշներ

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ, երկեզու՝ հայերեն և ռուսերեն, փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF տարբերակներով, այդ թվում նախահաշիվը՝ Excel տարբերակով:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ /ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ/**

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ 140 օրացուցային օր՝ համաձայն աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի (Հավելված N 1.1), ներառյալ քաղաքաշինական (պարզ) փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերումը, որից հետո ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պետական համալիր փորձաքննության:

**ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ**

Ըստ անհրաժեշտության (եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում՝ առանց փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011027795  
ՀՎՀՀ 02565827


Գլխավոր քարտուղար՝



**ԿԱՏԱՐՈՂ՝**

«ՀԱՆԳՎԱԾ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխյան փ. 7/11  
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11500348005680  
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝



Է. Մարտիրոսյան

Կ.Տ.

« 05 » 12 Հավելված N 1.1  
 2019թ. կնքված  
 N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/39 պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՑԻԿ**

**ՀՀ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման**

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 140 օրացուցային օր)																			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	Ելակետային նյութերի հավաքագրում	■																			
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում	■																			
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը			■	■	■	■	■													
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻՉԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում						■	■													
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում										■	■									
6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ									■	■	■	■	■	■						
7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ										■	■	■	■	■						



**ՀՀ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ**

**Նոյեմբերյանի պետական գյուղատնտեսական քոլեջ` 350 ուսանողական տեղ հզորությամբ**

**1. Վերակառուցվող վարչական շենք /վերահատակագծվող որպես հանրակացարան 20 տեղով /**

Հ.հ	Սենյակի անվանումը
1.	Կացարաններ
2.	Սանհանգույցներ
3.	Խոհանոց
4.	Ռեկրեացիաներ
5.	Այլ հարակից և անհրաժեշտ սենքեր

**2. Նոր կառուցվող ուսումնական մասնաշենք 350 տեղով և ադմինիստրատիվ մասով**

	Սենյակի անվանումը
	Ադմինիստրատիվ մաս
-	Վարչական սենյակներ
	Ուսումնական մաս
1	Ուսուցչանոց
	Մեթոդական հանձնաժողովի սենյակներ
2	Մաթեմատիկա և բնագիտական առարկաների մեթոդական հանձնաժողովի
3	Տեխնիկական առարկաների և մոդուլների մեթոդական հանձնաժողովի
4	Հումանիտար առարկաների և մոդուլների մեթոդական հանձնաժողովի
5	Տնտեսագիտական առարկաների և մոդուլների մեթոդական հանձնաժողովի
6	Գյուղատնտեսական մոդուլների մեթոդական հանձնաժողով
	Լսարաններ
7	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա
8	Յուրի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա
9	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)
10	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում
11	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում
12	Անասնաբուժություն
13	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)
14	Հագուստի մոդելավորում և նախագծում
15	Նախադպրոցական կրթություն
16	Հաշվապահական հաշվառում
	Ուսումնական կաբինետներ
17	Ավտոմեքենայի, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքի, Փականագործական սարքավորումների
18	Բույսերի պաշտպանության
19	Անատոմիայի, վիրաբուժության
20	Փայտամշակման տեխնոլոգիայի և սարքավորման
21	Հագուստի մոդելավորման և նախագծման մասնագիտացված
22	Նախադպրոցական կրթության մասնագիտացված
23	Հաշվապահական հաշվառման մասնագիտացված
24	Համակարգչային
25	Կենսաբանության
26	Քիմիայի, Ագրոքիմիայի
27	Ֆիզիկայի
28	Հայոց լեզվի, գրականության և օտար լեզուների

29	ՆԶՊ և քաղաքաշտպանության
30	Զենքի պահպանման պահեստ
31	Հրաձգարան
32	Գրադարան
33	Ընթերցարահ
34	Հանդիսությունների դահլիճ
35	Խոհանոց, Ճաշարան, բուֆետ
36	Սանհանգույցեր Լաբորատորիաներ
37	Բուսաբուծության, պտղաբուծության
38	Անասնաբուժության մասնագիտացված լաբորատորիա
39	Կաթնամթերքի վերամշակման տեխնոլոգիական սարքավորումների
40	Հագուստի մոդելավորման և նախագծման նյութերի փորձարկման
41	Փայտի նյութագիտության, Փայտանյութերի հետազոտման և փորձարկման Այլ հարակից և անհրաժեշտ սենքեր

**3. Նոր կառուցվող մարզադահլիճի մասնաշենք**

Սենյակի անվանումը	
1	Մարզադահլիճ 32x18 հատակագծային չափերով
2	Հանդերձարաններ
3	Սանհանգույցներ

- Բաց մարզահրապարակ

- Նախնական զինվորական պատրաստության բաց հրապարակ

**4. Նոր կառուցվող արհեստանոցների մասնաշենք**

Սենյակի անվանումը	
1	Ավտոմեքենայի, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների մեխանիզմների, ագրեգատների, տեխնիկական սպասարկման, վերանորոգման, փականագործական, Եռակցման աշխատանքների
2	Փայտամշակման
3	Եռակցման կարերի տեխնոլոգիայի

**5. Նոր կառուցվող անասնագոմ**

Անվանումը	
1	Խելացի անասնագոմ (5 կովի համար)
2	Մանր եղջերավոր կենդանիների (10 գլուխ)
3	Խոզանոց (6 գլուխ)
4	Թռչնանոց (50 հատ)
5	Ամառային բաց հրապարակ
6	Կաթի վերամշակման արտադրամաս (500 լիտր)

6. Զերմոցային տնտեսության կառույց / 400 քմ կամ 2 հատ 200 քմ/

7. Զեռնարկատիրական-Չրանոց (Էլեկտրական, արևային)

**8. Տրանսպորտային միջոցների պահպանման տարածք**

Սենյակի անվանումը	
1	Գյուղտեխնիկայի (2 հատ)
2	Ուսումնական ավտոմեքենայի (1 հատ)
3	Միկրոավտոբուսի (1 հատ)

- Ավտովարման հրապարակ


Գյուղտեխնիկան վարելու համար նախատեսված հրապարակ

9. Կաթսայատուն /վերագինվող, վերակառուցվող կամ նոր կառուցվող/
10. Էլ. ենթակայանի մասնաշենք/վերագինվող, վերակառուցվող կամ նոր կառուցվող-ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների/
11. Ջրի ռեզերվուարներ / հրդեհաշիջման և պահուստային ջրամատակարարման/
12. Նոր կառուցվող պահակակետ
13. Տարածքի ցանկապատ / վերակառուցվող կամ նոր կառուցվող/

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011027795  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

  
(ստորագրություն)



Տնօրեն՝

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«ՀԱՆԳՎԱԾ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխյան փ. 7/11  
«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11500348005680  
ՀՎՀՀ 00891484





Է. Մարտիրոսյան

Կ.Տ.

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

**ՀՀ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների**

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը՝	Աշխատանքի														
			հունվար	փետրվար	մարտ	իւլիս	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	71241200/45	ՀՀ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ														22 000 000	22 000 000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ  
 կառավարական տուն 3  
 ՀՀ ֆինանսների նախարարության  
 աշխատակազմի գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011027795  
 ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն)



Տնօրեն՝

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«ՀԱՆԳՎԱԾ» ՍՊԸ  
 ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11  
 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
 Հ/Հ 11500348005680  
 ՀՎՀՀ 00891484

(ստորագրություն)

Է. Մարտիրոսյան

Կ.Տ.



*(Handwritten signature)*

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N    հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

ստորագրություն

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

**ԱԿՏ N**

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը, 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

ՏՈՒՄԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
(պայմանագրի կատարման ապահովում)

« 04 » 12 2019թ.\*\*

ք. Երևան  
«ԶԱՆԳՎԱՏ» ՍՊԸ-ի ղեկավար Ընկերության տնօրեն Է. Մարտիրոսյանի (նույնականացման քարտի համարը՝ 001487438) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔԿ-ԳԿԱՇՁԲ-19/39» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետև՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետևանջելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած դիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետևանջելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԶԱՆԳՎԱՏ» ՍՊԸ

ընկերության անվանումը

Ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխյան փ. 7/11

ընկերության հասցեն

«Հարիզնեսրանկ» ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

h/h 11500348005680

ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 00891484

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը


տնօրեն Է. Մարտիրոսյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի



1. <b>ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ<sup>40</sup></b>	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «ՋԱՆԳՎԱԾ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 11500348005680	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00891484	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13. Շահառուի հաշվի համարը (հշ.Ն)՝ 900005000758	
14. Գումարը (թվերով և բառերով)՝ 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար)	
15. Ակցեպատվորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ (պայմանագրի կադրման ապահովման համար)	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____  /_____/	21.ա. Վճարողի ստորագրությունները  /_____/
22.բ. _____ Կ.Տ.	21.բ. _____ Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն /_____  /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն /_____  /ստորագրություն/
24.բ. _____ Կ.Տ.	23.բ. _____ Կ.Տ.
24.գ. "___" ___ 20___թ.	23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

<sup>40</sup> Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: